Պարոն Ա. Ուլիխանյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղրամյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան _____

22 մայիսի 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայիսի 15-ից 16-ը Լիսաբոն քաղաքում (Պորտուգալիա) կազմակերպված՝ «Էլեկտրաէներգետիկական շուկաների համակցում» թեմայով տարածաշրջանային դասընթացին մասնակցության

1. **Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Աշոտ Ուլիխանյան,
   - Լուսինե Հովհաննիսյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ,
   - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Լիսաբոն, Պորտուգալիա, 2024 թվականի մայիսի 15-16-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** ԵՄ-ն հանուն էներգետիկայի (EU4Energy) նախաձեռնության «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի

շրջանակում «Էլեկտրաէներգետիկական շուկաների համակցում» թեմայով կայանալիք երկօրյա տարածաշրջանային դասընթացին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ Դասընթացի բացման խոսքով հանդես եկավ և դասընթացի մասնակիցներին ողջունեց Էներգետիկ կարգավորողների եվրոպական խորհրդի փոխնախագահը՝ ներկայացնելով նաև հանդիպման առաջին օրը նախատեսված թեմաները: Մասնակիցներին ողջունեցին նաև Պորտուգալիայի կարգավորող հանձնաժողովի ներկայացուցիչը և Էներգետիկ կարգավորողների եվրոպական խորհրդի գլխավոր քարտուղարը:

Էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի ավագ փորձագետը հանդես եկավ ելույթով՝ ներկայացնելով էլեկտրաէներգետիկական շուկաների համակցման (փոխկապակցման) հիմնական հայեցակարգերն ու հիմնարար տարրերը, շուկաների զուգակցման տեխնիկական, տնտեսական և սոցիալական ազդեցությունները, ներքին գործընթացները, առավելությունները, զարգացումները, օպտիմալ գնագոյացումը, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկաների համակցման գործընթացում առերեսվող մարտահրավերները:

CNMC կազմակերպության էներգետիկայի գծով միջազգային կապերի բաժնի ղեկավարը ներկայացրեց էլեկտրաէներգետիկական շուկաների համակցման եվրոպական փորձը, գործող իրավական դաշտը և կարգավորումների առկա ձևաչափը, զարգացման/պատմության հիմնական հանգրվանները, էլեկտրաէներգետիկական շուկաների օր-առաջ հատվածների զուգակցման շրջանակները և հիմնական առանձնահատկությունները, ընդլայնման հնարավորությունները, եվրոպական գնային զուգակցման տարածաշրջանների հիմնական առանձնահատկությունները, դրանց առավելություններն ու հիմնական ձեռքբերումները, ապագա զարգացումներն ու առաջիկա մարտահրավերները:

Օրվա երկրորդ կեսին անդրադարձ կատարվեց տարածաշրջանային շուկաների ձևավորման մոտեցումների մարտահրավերներին և հնարավորություններին՝ էլեկտրական էներգիայի սակագների աճի և վերականգնվող էներգիայի խթանման տեսանկյունից: Սպառողներին անվտանգ, կայուն և մատչելի էլեկտրական էներգիայի մատակարարման ապահովումը պահանջում է էներգետիկ շուկայի ինտեգրում՝ միջսահմանային առևտրի խոչընդոտները վերացնելու և ընդհանուր էներգետիկ շուկայի կանոնները պահպանելու

միջոցով: Ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնվազեցնի ցանկացած երկրի էներգետիկ անկայունությունը և կախվածությունը, քանի որ մի երկրում արտադրված էլեկտրական էներգիան կարող է մատակարարվել մեկ այլ երկրի սպառողին: Ավելին, ինտեգրված տարածաշրջանային էներգետիկ շուկայի ստեղծումը կնպաստի երկրների վերականգնվող էներգետիկայի ներուժի լիարժեք օգտագործմանը, ինչը կհանգեցնի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի մասնաբաժնի ավելացմանը էլեկտրաէներգիայի վերջնական սպառման մեջ:

Հաջորդիվ, զեկուցողի կողմից ներկայացվեցին էլեկտրաէներգետիկական շուկաների համակցման գործընթացում ներառված հիմնական դերակատարներին և վերջիններիս գործառույթները: Մասնավորապես, ներկայացվեցին հաղորդման ցանցային օպերատորի, առաջադրված էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի (Nominated Electricity Market Operator) և շուկայի մյուս մասնակիցների հիմնական գործառույթները: Մանրամասն ներկայացվեցին օր-առաջ և օրական շուկաների համակցման առանձնահատկությունները, տրվեց տարբեր գործառնությունների նկարագրությունը, դրանց ժամանակագրությունը, այդ թվում՝ օր-առաջ և օրական շուկաներում էլեկտրական էներգիայի գնման և վաճառքի հայտերի մեկնարկի և շուկաների փակման, գործարքների տեղաբաշխման ժամանակացույցը: Հաջորդիվ քննարկվեցին առաջարկի և պահանջարկի ճկունության տարբերակները, շուկայում գների համակարգումը, էլեկտրական ցանցի սահմանափակումներով, ինչպես նաև ցանցի գերբեռնվածության դեպքում առևտուրը կարգավորելու ընդունված մոտեցումները, գերբեռնումների կառավարումը, ապա կարգավորողների գործիքակազմերը՝ ուղղված բաշխիչ ցանցի թողունակության հետ կախված խնդիրները լուծելուն, ճկունության հասանելիության տարբերակները (պայմանագրեր, բաշխման սակագներ և ճկունության մրցակցային գնումներ):

Նիստի երկրորդ օրը զեկույցով հանդես եկավ Պորտուգալիայի կարգավորող հանձնաժողովի շուկաների և մրցակցության ստորաբաժանման ղեկավարը՝ ներկայացնելով Իսպանիայի և Պորտուգալիայի էլեկտրաէներգետիկական շուկաների համակցման MIBEL մոդելը: MIBEL («Mercado Ibérico de Electricidad») թարգմանաբար նշանակում է Իբերիական էլեկտրաէներգետիկական շուկա, որը միավորում է Իսպանիայի և Պորտուգալիայի էլեկտրաէներգետիկական շուկաները՝ խթանելով և դյուրինացնելով էլեկտրաէներգիայի

առևտուրը երկու երկրների միջև: Շուկաների այսպիսի ինտեգրումը նպատակ ունի բարձրացնելու երկու երկրների էլեկտրաէներգետիկական համակարգի արդյունավետությունը, մրցունակությունը և էլեկտրական էներգիայի մատակարարման անվտանգությունը: MIBEL-ը գործում է Իսպանիայի և Պորտուգալիայի համապատասխան կարգավորող մարմինների հսկողության ներքո: Համառոտ պատմական ակնարկ ներկայացվեց Պորտուգալիա-Իսպանիա էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման և դրա անհրաժեշտության վերաբերյալ, նկարագրվեց MIBEL-ի գործունեության մոդելը, կարգավորման շրջանակը, կառավարման գործընթացը և ձեռք բերվող ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների շրջանակը: Անդրադարձ կատարվեց նաև փոխկապակցման և ենթակառուցվածքների համատեղ կառավարմանը, գերիշխող օպերատորներին (Dominant Operators), մոնիտորինգի համակարգերին, ինչպես նաև ներկայացվեցին MIBEL մոդելի ներդրման գործընթացից քաղված դասերը:

Օրվա երկրորդ կեսին մանրամասն քննարկվեցին MIBEL-ի գործարկման պրոցեսը, շուկայի մասնակիցների, շուկայի սեգմենտների, հաղորդման ցանցային և շուկայի օպերատորների գործունեության հետ կապված հարցեր: Ընդհանուր առմամբ, MIBEL մոդելը նպատակ ունի խթանել էլեկտրաէներգետիկական համակարգի մրցակցությունը, արդյունավետությունը և հուսալիությունը՝ դյուրինացնելով միջսահմանային առևտուրը, օպտիմալացնելով ռեսուրսների օգտագործումը և շուկայի մասնակիցներին տրամադրելով թափանցիկ գնային ազդանշաններ:

Դասընթացի վերջում բոլոր մասնակիցներին տրվել են «EU4Energy Regional Training on Electricity Market Coupling» դասընթացին մասնակցության սերտիֆիկատներ:

7.Հանդիպումները, ելույթները՝

Այցի ընթացքում հանդիպում և քննարկումներ ունեցանք Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդի (CEER), Պորտուգալիայի կարգավորող հանձնաժողովի և դասընթացին մասնակից այլ երկրների ներկայացուցիչների հետ, հնչեցին հարցեր և տրվեցին դրանց պատասխանները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով տարածաշրջանային էներգետիկ շուկաների զարգացումների վերաբերյալ հանդիպման ընթացքում հնչած ելույթների և քննարկումների արդյունքները՝

✓ Ակտիվ համագործակցել Արևելյան գործընկերության երկրների հետ՝ հաշվեկշռման շուկաների ներդրման և գործարկման ուղղությամբ, ինչպես նաև ուսումնասիրել Հայաստանի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի օրական հատվածի ներդրման հնարավորության հարցը,

✓ Առաջիկայում դիտարկել Վրաստանի կարգավորող մարմնի հետ համատեղ հանդիպում կազմակերպելու հնարավորությունը՝ շուկաների փոխկապակցմանն և միջպետական առևտրի խթանմանն առնչվող օրակարգով,

✓ Պարբերաբար մասնակցել միջազգային գործընկերների կողմից կազմակերպվող էլեկտրաէներգետիկական շուկաների ազատականացման և դրանց փոխկապակցման վերաբերյալ կազմակերպվող սեմինարներին, դասընթացներին՝ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ներկայիս փուլում տեղում ծանոթանալ միջազգային պրակտիկային, ուսումնասիրել տարբեր երկրների պատվիրակների կողմից ներկայացվող էլեկտրաէներգետիկական շուկայի տարբեր հատվածներում (օր-առաջ, հաշվեկշռվող շուկաներում) առաջացող պրակտիկ խնդիրները:

Դասընթացի օրակարգը, ներկայացված բոլոր փաստաթղթերը, ներկայացումներն ու տեղեկատվությունը հասանելի են https://www.eap-events.eu/ehome/regional-training-on-electricity-market-coupling/documentation/ հղումով:

Գործուղվող ---------- 22.05.2024թ. ---------- ***Ա. Ուլիխանյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 22.05.2024թ. ---------- ***Լ. Հովհաննիսյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

22.05.2024թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ___Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 226-ՀՆ, Հրաման 227 -ԳՔ 04.04.2024թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ **Աշոտ Ուլիխանյանին** ,

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության էլեկտրաէներգետիկական շուկայի բաժնի պետ **Լուսինե Հովհաննիսյանին**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք. **Լիսաբոն** /Պորտուգալիա /

5. Գործուղման ժամկետները՝ **14.05.2024թ.-ից** 17.05.2024թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**,

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ **օրապահիկ** :

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Աշոտ Ուլիխանյան	Լուսինե Հովհաննիսյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)	-	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	93	93	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,133	39,133	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	156,534	156,534	313.068
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		156.534	156.534	313.068

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 20.05.2024թ.